ԱՐԱՐԱՏ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՓԱՌԱՓԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Գարսկաստանի համար տարեկան 5 ֆր. և կամ 2 րբլ. 50 կ. թղթդրմ.

Ուրիշ ամեն տեղի համար ուր այս լրագրի մուտքը արգիլուած չէ, տարեկան բաժնորդագինն է 20 ֆր., վեցամսեայն 10 ֆրանգ և եռամսեայն 5 ֆրանգ։

Բաժնեգիններըը կանխիկ կը վճարուին և Տնօրէնութիւնն ինք կը վճարէ լրագիրը ղրկելու փոստի ծախքը։

Նամակ և ծրար պէտք է ղրկել հետեւեալ հասցէով. M. PORTOUKALIAN, rédacteur du journal *Arménia*. MARSEILLE (France)

Զ ՏԱՐԻ ԹԻԻ 68

1891 ԱՊՐԻԼ 25

ԱՊՐԻԼ 13 (Հ. Տ.)

ՁԱԽԱՔ

Խմբագրութիւնը և Տպարան

ԳԱՑՄԱՆՆԵՐ

Խմբագրութիւնը, եթէ հարկ համարի, համառօտելով և կամ մասամբ միայն կը հրատարակէ իրեն ղրկուած գրութիւններն։

Գարտաւոր չէ վերադարձունել չհրատարակուած ձեռագիրներն։

Յանուցումներ կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով։

Յանուցման 1 միջակ գիրը 1 սանդիմ կարժէ. 1 գլխագիրը 2 սանդիմ։

Les annonces, en français et en arménien, sont reçues aux bureaux de la Rédaction (Allées de Meilhan, 44.)

ՀԱՑՈՑ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

==

ՆՊԱՏԱԿ ԵՒ ՄԻՋՈՑՆԵՐ

(Ջադուած կանոնագրեն)

«Հայոց Հայրենասիրական Միութեան» նպատակն է աշխատիլ վարչական բարենորոգութիւններ մացուներու Թիւրքահայաստանի մէջ, Հայ ժողովրդի տեղական պէտքերին համաձայն։ Հայ ժողովրդի ցանկութիւնն է իրաւունք ստանալ ազատօրէն ինքզինք կառավարելու որով միայն պիտի կրնան վերնալ այն հալածանքներ որոնք այսօր Հայաստանին թշուառութեան և աւերակ դառնալուն պատճառ կը լինին։

«Հայոց Հայրենասիրական Միութիւն»ը իր նպատակ իրագործելու համար իր կարողութեան չափով կը գործադրէ ամեն յարմար եղած միջոցներն, ժամանակի պահանջներին համեմատ կաշխատի ներքին այժ գոյացունել Ազգին մէջ իր ազատութեան համար, հրատարակութիւններ կանէ, դիմումներ կանէ որոց որ պէտք է և նիւթապէս ու բարոյապէս կը քաջալերէ անոնց որոնք անձնուիրութեամբ կաշխատին հայրենիքի ազատութեան գործին։

Միութիւնը կունենայ իրեն բերան եղող լրագիր որ, բացի զանազան լուրեր տալէ իրրեւ լրագիր, կը հսկայ ընդհանրութեան ինչ որ Միութիւնը ուզէ հաղորդել, տեղեկութիւններ կուտայ Հայաստանի և տարբեր հայերի դրութեան վրայ և կը ծառայէ հայրենասիրական եռանդը արծարծելու Հայերին մէջ։ *

Տաճօր. «Հայոց Հայրենասիրական Միութեան» անդամակիցել կամ թղթակից ուզողներն պէտք է դիմեն հետեւեալ հասցէին.

M. Portoukalian

(FRANCE) Marseille

* Հայոց Հայրենասիրական Միութիւն»ը կը նպատէ Արմենիա լրագրի հրատարակման։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նամակ Ռոմանիայէն (Ֆօքշան)։ —Ռուս մամուլը եւ Փարիզի L'Orient լրագիրը.— Հարստահարութիւններ ի Թիւրքահայաստան.—կարգայոյժ Մամբրէ վարդապետը. — Ազգատեացք (ստանաւոր). — Նոյիրատուութիւններ «Հայոց Հայրենասիրական Միութեան».— Թիւրքիահայ լուրեր.— Լեհական գործեր.— Յանուցումներ.— Բանասիրական (Թոմաս Բոցարիս)։

ՆԱՄԱԿ ՌՈՒՄԱՆԻԱՅԷՆ

ՀԱՆԴԷՍ ՕՐՄԱՆ
ՍՏ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՑ
ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ

Անցեալ 24րդ օրն մի նշանաւոր և յաւիտեան յիշատակելի օր մ'եղաւ տեղւոյս մեր բոլոր ազգայնոց համար, որք միահամուռ կը պատրաստուէին երկնից ընծայելի փոքրիկ, սակայն եկեղեցւոյ մը հիմնարկութեան սուրբ օծումի շքեղ հանդէսն կատարելու։

Տեղւոյս ազգայիններէն յատկապէս ի Տիար Յարութիւն Փոփոփիչեան՝ բարեհամբաւ վաճառականն՝ իր կնոջ դանութեան առնն փոփագելով մշտական յիշատակութեան արժանի գործ մը թողուլ աշխարհի վերայ, ուխտած էր իր եղբայր Տիար Կարապետի հետ, տեղւոյս ազգային գերեզմանատան մէջ մատուռ մը հիմնելու Աստուածածնայ գոթիկ մը կատարել. սակայն անագորոյն մահն, իր սակրաստուր գերանդիով, տարաժամ հնձեց նորա պաղատու կեանքն, և ասոր համար չկրնալով մարմնաւոր աչօք տեսնել իր բարի բաղձանաց լրումն, լուսահոգին իր սուրբ ուխտի կատարումն, իրրեւ կատակ յանձնարարեց իր երեք ազնիւ փեսայից, որք են Տիարք Աստուածատուր Քրիմեօֆեան, Նիկողայոս Ստեփանեան և Նիկողայոս Բօպօվիչեան։ Սոքա, միացեալ ուխտակից Տիար Կարապետ Փոփոփիչեանի հետ, ձեռնարկեցին ի կատար հանել այդ առաքինեաց սուրբ նպատակն։ Այս առթիւ Պատ. Հոգաբարձութիւնն յատկապէս հրաւիրեց Կալայէն պ'Պեր. Գէորգ Ծ. վարդապետ Երէցեան, միաբան Սուրբ Երուսաղեմի Ուխտին և այցելու Ռուժանահայոց, որ արդէն ազգային Գատ. բիւրքարանէն արտօնեալ էր սոյն օծման հանդիսի արարողութիւնն կատարել։ Նոյնպէս հրաւէր կարդաց բոլոր Ռուժանահայոց, տեղական Հոգաբարձութեանց միջոցաւ, ի մասնակցութիւն

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԹՈՄԱՍ ԲՈՑԱՐԻՍ

(Ցուհական պատմուբիւնից)

(Շար. 67րդ բուհն)

Խրճիթի մէջ ամեն բան տակն ու վրայ էր. մահիճը քանդուած, աթոռները չարդու փշուր խաւնուած պղնձեղէնների և կոտրտուած ամանների հետ. մէջտեղում տեսնվում էր արեան մի փոքրիկ լճակ որ տարածվում էր մինչեւ դուրս. չորերը գզգզուած, իր թոռը ընկած ցցից և, ի լրումն ամենայնի, գետնի վրայ ընկած գաւա նա քրոջը տուած իր դաշոյնը...։

Էլէնան չը կար։

Պահ մը կարծեց թէ խենթանում էր. ձեռները մազերի մէջ կոխեց և աղաղակեց սպիողորմ ձայնով.

— Էլէնա՛...։

Յետոյ դուրս վազեց, մի քանի կատաղի թռիչներով խրճիթների առջեւից անցաւ, նորէն վերադարձաւ, ծովափը վազեց և փշաքաղեցնող ձայներով, ոռնալու պէս գոռում էր.

— Էլէնա՛, Էլէնա՛...։

Էլէնան չը կար։ Թոմասը կանգ առաւ, պահ մի մտածեց։ Այդ միջոցին նրա միտքըն ընկաւ որ կարող էր Էլէնան դրացիների տունը գնացած լինել։

Սրացաւ դէպի խրճիթները և կատաղութեամբ ներս ընկաւ. ոչ ոք չէր տեսել Էլէնային։

— Ի՞նչ կայ, ի՞նչ կայ, հարցնում էին բոլորը հետեւելով նրան։

— Էլէնա... աղաղակում էր Թոմասը գժի պէս, վազում էր ամեն կողմ, պատսպ էր գործում խրճիթի չորս կողմը. նրա աչքերը մեծացել, ձայնը խռպոտել, դիւահարի էր նմանում...։

Ընդոլները կանգ առին, խրճիթներից բոլորը դուրս թափուեցին և ամեն ոք յուզուած դիտում էր այդ տեսարանը։

Թոմասը վազում էր մէկից միւսի մօտ, բռնում թեւերից, ուժգնութեամբ թափահարում էր նրանց և հարցնում.

— Ասացէ՛ք, Էլէնային չը տեսա՞ք։

— Ա՛ւ, չը տեսանք, պատասխանում էին նրան տխրութեամբ։

Թոմասը յուսահատած ներս մտաւ խրճիթը։ Ներս մտնելուն պէս, նրա աչքը ընկաւ մի կլոր սպիտակ բանի որ կանգ էր առել մահճակալի մի ոտի մօտ։

Աչքերը փայլեցին, ցատկեց դէպի նա և ձեռքն առաւ մի թրքական վաթոթ, մի ապարօշ։

Յետոյ դուրս, ատամները կրճտեց և մտածեց։

— Կադիի չալմա՛ն է..., գոռացին ներս մտնող դրացիները։

Յանկարծ Թոմասը լռեցաւ, այլ եւս չէին դողում նրա ձեռքերը և ոչ իսկ այնպէս վախ ազդում նրա ակնարկը։

Դրանց փոխարէն նա այժմ մեռելային գունատութիւն ստացաւ։

— Ա՛, ասաց նա. կադի՞ն է... և կադին բարեհաճել է քոյրս առնե՞լ... տեսնե՛նք...։

Ասաց, ապարօշը առաւ ձեռքը ու դուրս թռնելով խրճիթից սկսեց վազել դէպի քաղաք։

Ամենքը վազն ի վազ հետեւեցին նրան։

Գ

Այդ պատահում էր Թոմասի մօր մեռնելուց ուղիղ մի տարի յետոյ։ Քաղաքի մեծ հրապարակը լիքն էր բազմութիւնով. արդէն խաղերը և պարերը սկսել էին։ Մի կողմում յոյն երիտասարդների մի խումբ շրջապատել էր նուագածուներին, մի կլոր պար էր բռնել. մի ուրիշ կողմ երկրորդ խումբը երգելով «առնաւուտ»ի (1) պէս կաքաւում էին. մի ուրիշ խումբ «էլէնիքա» էր երգում. իսկ հրապարակի մէջ տեղում երկու գօտեմարտներ կիսամերկ մարտնց էին կռիւ։

Ցոյն կիներ, տղայներ, ծերեր կանգնել դիտում էին. ամբողջ քաղաքը այդտեղ էր. այդտեղ էին նաեւ հեռու խրճիթներում թուրքերը որոնք լրբութեամբ սպրդում էին ամեն խմբի մէջ, ծպրտում, հայհոյում էին, մի կնոջ նայելով համարձակօրէն խօսքեր էին ձգում և երգողներին ծաղրում։

(1) Ալբանիացի։

Ի ժամ ճիշդ 3 Հանդիսի արարողութիւնն սկսաւ, ընդ նախագահութեամբ Գեր. Երէցեանի՝ աջակցութեամբ երեք Արժ. Հարցն, որք էին քաղաքիս եկեղեցւոյ քահանայն՝ Տ. Գէորգ Հալալեան, Սուչաւայի Տէր Լեւոն և Կայսրի Տէր Ղեւոնդ յարգելի Հայրերն։ Աւետ լորդ կը համարիմ մի առ մի նկարագրել հայրենանուէր Արմենիայիդ աղնիւ ընթերցողաց հանդիսիս մանրամասնութիւնքն և միայն բաւական է ըսել որ հիմնարկութեան Ս. օծումի հանդէսն կատարեցաւ համաձայն Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ Հայրապետադիր օրինաց և այնպիսի չքեղութեամբ, որ արդարեւ պատիւ կը բերէ թէ՛ հայ ազգութեան պատկառելի և հնադարեան եկեղեցւոյն և թէ՛ ի մանաւորի Ֆօքչանի աղնիւ ազդայնոց։

Նշանակութեան և միանգամայն յիշատակութեան արժանի կը համարիմ աստ դնել եսայի Մարգարէի ընթերցուածներէն 1–2 պարբերութիւնք, որոնք չատ պատշաճ կողմեր ունին մեր ազգի այժմեան կացութեան հետ։ Ի միջի այլոց յիշեալ խորհրդամիտ Մարգարէն կը յայտնէր առ ունկնդիրս. «Այսպէս ասէ Տէր, չինեսցեն տունս՝ և ինքեանք բնակեսցին, տնկեսցեն այգիս՝ և ինքեանք կերիցեն զպտուղս նոցա»։ և յիրաւի այս իսկ է մեր ազգի ներկայ արդար պահանջն, այսինքն՝ ԻՆՁ ՈՐ ՀԱՑՈՒՆ Է՝ ՊԷՏՔ Է ՀԱՑՈՒՆ ՄԸ-ՆԱՑ ՄԻՇՏ։ Միեւնոյն Մարգարէն, գիտես թէ, փափագելով զՀայ ազգն պատրաստել, գարձեալ կը կոչէր բարձրաձայն «Լուսաւորեա՛ց, լուսաւորեա՛ց, Երուսաղէմ, զի հասեալ է լոյս քո և փառք Տեառն ի վերայ քո ծագեսցի»։

Օծմամբ սրբագործեալ 16 քարանց կնքահայրերն եղան վարժարանի ուսանողքն, այս ալ իր զուգադիպական խորհրդաւոր կողմն ունէր, զի Ֆօքչանի Հայոց ապագայն այդ մանուկներն կը կազմեն և եկեղեցին աւելի ապագային է քան թէ ներկային։

Յաւարտ արարողութեան Գեր. Երէցեան խօսեցաւ մի ազդու և գեղեցիկ քարող, որ իմաստ էր թէ «եկեղեցին է Հայոց ազգի պարծանքն, եկեղեցին է նորա գոյութեան պահպան հրեշտակն, եկեղեցին է նորա զօրաւոր վահանն ընդդէմ ամեն տեսակ փոթորիկներու, վերջապէս եկեղեցին է մարդոց խառվեալ ու անջատեալ սիրտերն իրարու և Աստուծոյ հետ կապողն»։ Սոյն քարոզն մեծ ազդեցութիւն րրաւ հանդիսականաց վերայ և իր անմիջական արդիւնքն եւս ցոյց տուաւ ինչ ինչ պարագայից մէջ։ Ակնհետ էր երկսեռ ուսանողքն միաբերան երգեցին ազգային զանազան երգեր, որոց յաջորդեց վարժարանիս փողբրիկ, այլ կրակոտ ուսանողներէն Յակոբիկ Սոդոմեանի կարդացած ճառն, որով ղհանդիսականս կը քաջալերէր և օրհնութիւն կը ձօներ ազգային ամեն բարերարաց։

Արդարեւ աչխարհիս այս կարճատեւ կենաց մէջ, անմահութիւն ձեռք բերելու համար, բացարձակ և անհրաժեչտ պայմանն է եկեղեցւոյ և միանգամայն ազգի ՓԱՌԱՑ ու ՄԵԾՈՒԹԵԱՆ նման տուող անջնջելի յիշատակներ թողուլ, որք յաւէտ խօսին ամեն կենդանի սիրտերու հետ յաւարտ մարդկային կենցաղոյն. ուրեմն բի՛ւր երանի այդ օրինակ աստուածասիրական և հայրենասիրական գործոց հեղինակներուն, որոնց օրօրոցին վերայ առաքինութեան և հայրենասիրութեան հրեշտակներն երբեմն հսկած են և իրենք գործնականն ապացոյցներով իրաւունք ստացել են պատմութեան մէջ որոշեալ էջեր գրաւելու։

Տակաւին հանդէսն գիւր վերջ չը գտած՝ սոյն բարեպատեհ առիթովն, Նորին Գերապատուութիւնն հոգեհան. գստեան աղօթքն կարդաց լուսահոգի ուխտադիր Բարութիւն Փօփօվիչեանի մահարձանին վրայ, որ յոտին կանգնած էր անչուչ՝ առընթեր կառուցանելի մատրան։ Նոյնպէս օրհնեց զգեստեղէնն բարեյիչատակ Տէր Յակոբ Աւագ քահանայի, որ 4–5 ամիս յառաջ առ Աստուած փոխած էր։ Սա քաղաքիս մերայնոց համար երախտաւոր քահանայ մ'եղած էր։

Հուսկ ուրեմն Գեր. Երէցեանն նախ բարեմաղթութիւն մ'ըրաւ ի յաջողութիւն ձեռնարկեալ գործոյն ու ապա կրկնակի օրհնեց զյիշատակն հանգուցեալոյն և զիւր առաքինացեալ կենդանի եղբօրն Կարապետի, օրհնեց զերիս աղնիւ փեսայս, զդստերս, զազգականս և զհամայն հանդիսականս, որոնք մեկնեցան ամենաքաղցր տպաւորութեանց ներքեւ՝ իւրեանց հետ տանելով այսպիսի գեղեցիկ և անմահական հանդիսի մը յիշատակութիւն։

* * *

Աւելորդ չեմ համարիր յիշատակել նաեւ թէ Գեր. Երէցեանի և յիշեալ երկու աջակից քահանայներու թէ՛ ընդունելութեան և թէ՛ մեկնման առթիւ տեղւոյս Պատ. Հոգաբարձութիւնն և բազմաթիւ ազգայինք, ըստ արժանւոյն պէտք եղած պաշտօնական յարգանքները ցոյց տուին յամենայնի։

Դարձեալ չպէտք է անյիշատակ թողուլ նոյնպէս զՄեծ. Տիար Նիկողայոս Բօպօվիչեան, որ շաբաթէ մ'ի վեր վանատու–հիւրընկալն եղաւ յիշեալ պատկառելի եկեղեցականին, այլ հանգուցութեան համար թէ՛ Տիար Բօպօվիչեան և թէ՛ իւր համեստափայլ տիկինն ամեն տեսակ հոգատարութիւնն ունեցան։

* * *

Կարեւոր գտաւեցաւ գրել հանգուցեալ Յակոբ Աղա Փօփօվիչեանի կեն սագրութիւնն, որոյ հետ տեղեկութիւն տալ իւր առաքինի եղբարց, փեսայից, դստերաց և համայն գերդաստանին վերայ։ Սոյն գրութեան կցեալ է ժամանակակից համառօտ պատմութիւն մը Ռուսահայոց այժմեան բազմամարդութեան, նիւթական և բարոյական վիճակին վերայ, որպէս և համայն Հայ ազգի ներկայ կացութեան, չարժմանց, դիպաց և սուրբ նպատակին վերայ։

Այս պատմական յիշատակարանն այսօր թողուեցաւ, յատուկ խնամօք, կառուցանելի եկեղեցւոյ դրան սեմին տակը յօգուտ և իւրայ ապագային, որուն կը ձգտին ամեն հայ միտքերն։

18/30 մարտ 1891

Ֆօքչան ԲՈՁ

ՌՈՒՍ ՄԱՄՈՒԼԸ ԵՒ ՓԱՐԻԶԻ L'ORIENT ԼՐԱԳԻՐԸ

Բաւական չէ որ այլազգի թղթակիցները չատ ժամանակ կաչառուած, սուտ են խօսում Հայոց գործերի մասին ու տալիս այնպիսի տեղեկութիւններ Հայերի վիճակի մասին որ Հայաստանի հետ ծանօթ մարդը չատ պատ ձեռք այդ կարդալով, այժմ երեւոյթ են գալի և գուչակող հրապարակախօսներ, որոնք աչխատում են բոլոր միջոցներով ապացուցանել թէ Հայերի ձգտումները դէպի քաղաքական ինքնավարութիւնը ո՛չ երբէք չեն իրագործուիլ։ Այդ միամիտներ կարծում են թէ իրանց առաջ բերած կասկածելի փաստերը կարող են ոչնչացնել Հայերի մէջ արմատներ թողած գաղափարները։ Ռուսաց մամուլի համար, որը միայն դէպքեր է փնտռում Հայերին նոյնը ցոյց տալ, չատ հաճելի երեւաց L'Orient լրագրի խմբագիր Նիկոլաէսի գրած յօդուածը։ L'Orientի խմբագիրը, որը վաղուց է արդէն գրում Աբեւելքի մասին և իրան համարում է համարում արեւելեան գործերի մէջ, այժմ բացարձակ յայտնում է որ «Հայերի ձգտումները Հայաստանից մի Բուլգարիա նման իշխանութիւն ըստեղծելու մասին չեն իրագործուիլ» և ահա թէ ինչ պատճառների վերա է հիմնում իր ասածը։ (Այստեղ բերում եմ թէ՛ Ռուսաց մամուլի և թէ՛ L'Orientի յայտնած մտքերը, որովհետև դոքա իրար են նման)։ «Հայերը չեն ըստանալ քաղաքական ինքնավարութիւն, որովհետեւ նոքա մտիկ ազգականութիւն չունեն եւրոպական ազգութիւններին հետ։ Էանօգրաֆիական և աչխարհագրական հանգամանքները Հայերին աւելի մտերմացնում են Պարսիկներին, որոնցից մի միայն զանազանվում են հաւատով (?)։ բայց Պարսիկները վաղուց են արդէն Ռուսաց ազդեցութեան տակ գտնվում, ուրեմն և Հայերն էլ նոյն վիճակին կեն. թարկուեն, եթէ ցանկանան Սուլթանից անկախ ապրել։ Վերջապէս, եթէ մեկը աւելի մտիկ ծանօթանայ Հայերի վիճակի հետ, պիտի խոստովանի որ դոցա գրութիւնը թէ՛ Թիւրքիայում, թէ՛ Ռուսաստանում լաւ է, բայց ինչ վերաբերում է Քիւրդերի հարստահարութիւններին, այդ բոլորը աստիճ մեծացրած է, որովհետեւ չատ յաճախ Քիւրդերը Հայերից են կրում նոյն տանջանքները ու չարչարանքները։ Բայց ինչ քան էլ լաւ դրութեան մէջ լինեն Հայերը Թիւրքիայում, այնու ամենայնիւ դոքա ձգտում են դէպի քաղաքական անկախութիւնը։ Այս ճիշտ է, միայն ո՛չ ամբողջապէս։ Հայերը ձգտելով դէպի քաղաքական ինքնավարութիւն, հետևում են Թիւրքիայի ուրիշ ազգութիւններին թէեւ այստեղ աւելի մեծ դեր է խաղում անգղիական պրօպագանդան։ Եւ եթէ հայենական խնդիրը առանց պատճառի առաջ է եկել անգղիական պարլամէնդում, ո՛չ թէ Հայերին ցանկութեամբ այլ Անգղիացոց, որոնց աւելի է հետաքրքրում այդ հարցը։ Մենք կարծում ենք որ եթէ հայենական խնդիրը դադարի Թիւրքիան ունի, այն էլ այն պատճառով որ Լոնտոնում են այդ ցանկանում. առանց անգղիական պրօպագանդայի հայենական խնդիրը կկորցնի իր նշանակութիւնը»։ Այսպիսի տողեր մենք առաջին անգամ չենք կարդում այն լրագրերի էջերում, որոնք օրեւիցէ միջոցներ են փնտռում իրանց մտքը

Ների առջեւից անցած ժամանակ բերանները ծամելով ու այլանդակ ձայներ հանելով, ծաղրում էին յունական ազգային երգը։

Ցոյները գունաթափվում էին, կային ոմանք էլ որ կամենում էին ջարդ ու փշուր անել ծաղրող Թուրքերի առաջները. բայց զսպում էին իրենց և չարունակում էին երգել, միայն այս անգամ դառն, բեկբեկ և տխուր ձայնով...։

Յանկարծ լսուեց մի աղաղակ. պարողները կանգ առին, երգողները լռեցին, գօտեմարտները զատուեցին և ամբոխը ճանապարհ բաց արեց մի խմբի որի առջեւից վազում էր Թոմասը մազերը ցրուած, դէմքը գունաթափ և ապարօշը օդի մէջ երերցնելով։

Նա վազեց հրապարակի մէջտեղը, կանգ առաւ և երբ բոլորը միմեանց հրելով չրջապատեցին նրան, չարժեց ձեռքը ու գոռաց.

— Ցոյնե՛ր, էլէնիքայի զաւակնե՛ր, լսեցէ՛ք թէ Թոմաս Բոցարիսը ի՛նչ կըպատմէ ձեզ...։ Մի տարի առաջ Թուրքերը խլեցին մեռնող մօրս տակից նրա մահիճը, գաւաթկեցին խրճիթը և չը խղճացին մեռնողին խակ. խակ այսօր նրանց մեծը, Կադին, որի ապարօշը ընկած գըտայ մեր խրճիթում, յափշտակեց իմ քոյրը, էլէնային, որին բոլորդ ճանաչում էք... այդ միեւնոյնն է թէ Թուրքը անպատուեց, առեւանգեց ամբողջ էլէնիքային...։ Ցոյնե՛ր, Թուրքը խլեց մեր հացը, մեր ազատութիւնը, չան պէս ըստիպեց լզել իւր ոտը, պղծեց մեր տաճարները և այսօր խլում է մեր աղջիկները, յայտնի համարձակ տանում է նա մեր կանանց... էլ ի՞նչ մնաց մեզ, Ցոյնե՛ր, եթէ ոչ ծովը թափել և սատակել չան պէս քան կրել այս գլուարիը, նստել այս հողի վրայ...։

Բոլորը չարժեցին, մի խուռ մռմռոց տարածվեց ամեն կողմ. էլէնային կադին յափշտակել է, կայծակի արագութեամբ ասացին միմեանց բոլորը. կարծես իրենց քոյրերը կամ կանայքն էին յափշտակել։

— Այո՛, չարունակեց Թոմասը խորին լռութեան մէջ. էլ ոչինչ չը մնաց մեզ, տատրացանք մինչեւ գետին, լզեցինք ընդանց ոտները և եթէ թոյլ տանք ազատօրէն տիրանալու մեր կանանց, ոչնչով պակաս չենք լինել կաւատներից... իսկ Ցոյն և կաւատութիւն... Թող ոչնչանայ Ցոյնի անունը այլ եւս և Թող երկինքի հուրը մոխիր դարձնէ մեզ բոլորիս, քանի որ մենք լուռ կը մնանք և դեռ եւս կը չարունակենք մի բուռ կատաղիների ճանկերի մէջ թափառալ...։

Յանկարծ հեռուից երեւեց մի ձիաւոր որի կողքից հետեւակ գնում էին չատ զինուած անձեր։

Ձիաւորը տեսաւ որ ամբոխը լուռ է և մի ինչ որ մարդ խօսում է յուներէն։

Վ. ՓԱՓԱԶԵԱՆՑ

(Շարունակելի)

«Ա՛յդ ինչ ես դուն ուզում, որ ես անեմ, ասա՛ ինձ, ես էլ անեմ, ինչ որ դուն ուզես, միայն թե ինձ ձեռքից չազատես, ինձ հետ միշտ ապրիր, ինձ հետ միշտ ուրախ եղիր, ես էլ քեզ հետ ուրախ կլինեմ, ես էլ քեզ հետ կապրեմ, ինչ որ դուն ուզես, ես էլ կուզեմ, ինչ որ դուն չուզես, ես էլ չեմ ուզում, ինչ որ դուն սիրես, ես էլ կսիրեմ, ինչ որ դուն ատես, ես էլ կատեմ, ինչ որ դուն ծիծաղես, ես էլ կծիծաղեմ, ինչ որ դուն լացես, ես էլ կլացեմ, ինչ որ դուն մեռնես, ես էլ կմեռնեմ

ԹԻՒՐՔԻԱՅԷՆ ԼՈՒԻՐԵՐ

Կ. Պոլսէն կը գրեն. «Վախ կայ թէ Ռուսիոյ և Թիւրքիոյ միջեւ առեւտրական դաշնագրի բանակցութիւնները անհամաձայնութեան մը յանգին այս կէտի մասին թէ ինչ տեսակ վառոդունք լինելու է այն ռուսական նաւերի նկատմամբ որոնք «ռուսական կամաւոր շրջուն նաւեր» կը կոչուին։ Այժմ Թիւրքիա կարծօնէ այս նաւերին անցուդարձը Տարտանէլի նեղուցէն, ազոնց կողմէն արուած պարզ յայտարարութեան մը վրայ։ Բայց այդ նաւեր միայն առեւտրական նաւեր չեն, և կը ծառայեն նաեւ զէնքի և զօրքի փոխադրութեանն, որով պատերազմի ժամանակ ադոնք նաւատորմի մաս կը կազմեն։ Արդ Ռուսիա այժմեան բանակցութիւններուն մէջ կուզէ առիթէն օգուտ քաղել և պահանջել որ առեւտրական դրօշակ կրող բոլոր ռուս նաւեր կատարեալ ազատութիւն ունենան Թիւրք նաւահանգիստներուն մէջ եղեւ մուտքի, այնպէս որ այդ «կամաւոր շրջուն նաւերն» ալ օրինակի համար կարենան Սեւ ծովի բոլոր նաւահանգիստներն մտնել և ելնել։ Թիւրքիան կը վարանի այս պահանջման դոհացում տալ. այս է պատճառ որ առեւտրական դաշնագրի բանակցութիւնները ալ այժմ դժուարութեամբ կը քաշքշուին։»

ԼԵՀԱԿԱՆ ԴՈՐՁԵՐ

Վարշաւիայէն կը հեռագրեն ապրիլ 20 թուով.

«Մտատանջութիւն պատճառող լուրեր սկսած են տարածուիլ Լեհաստանի մէջ։ Մութ կերպով խօսքեր կը գառնան լեհական մի գաղտնի ապստամբականկազմակերպութեան մասին. իբր թէ այդ կազմակերպութիւն իւր ճիւղերն տարածեր է Կալիցիահ (աւստրիական Բոլոնիա) և Փոզնանիահ (բրուսիական Բոլոնիա) մէջ ալ, նպատակ ունենալով պատրաստուիլ մի ընդհանուր ապստամբութեան համար Ռուսաստանի դէմ, երբ Եւրոպահ մէջ միջազգային խառնաշփոթութիւններն ակսին։»

— Վարշաւիա, 21 ապրիլ. Կառավարութիւնը խիստ միջոցներ ձեռք առած է արգիլելու համար որեւէ մի ցոյց որ տեղի ունենայ 1797ի սահմանադրութեան հարիւրամեակին առթիվը։

Լեհացիներուն մէջ յայտարարութիւններ կը ցրուին յորդորելով գանձանք ապստամբելու ռուս բռնակալութեան դէմ. այդ յայտարարութիւններ կը վերջանան հետեւեալ բառերով. «Աստուած փրկէ Լեհաստանը»։ Վարշաւիահ մէջ ոստիկանութիւնը բազմաթիւ խուզարկութիւններ կատարեց. 50 անձեր կանձերբակալուած։ Կը հաստատեն որ երկաթ բանկ ալ իւր գործէն դադրեցուցած է։

— Պետերբուրգ, 22 ապրիլ. Բրուսական կառավարութիւնը իր բանկի մէջ գտնուող Լեհացիներուն արտօնած էր որ իրենց վարժարաններուն մէջ սովորին լեհերէն, ինչպէս նաեւ կրօնագիտութիւնն ալ իրենց մայրենի լեզուով աւանդուի։ Ռուսական լրագիր «Սվէտ» մի հնարք կը նկատէ Բրուսիահ այս անօրէնութիւնը որպէս զի ազով Լեհացիները գրգռուին Ռուսիահ դէմ, թէեւ, կը յարէ «Սվէտ», իրենք իրենց գոյութիւն իրրև ազգ, կը պարտին Ռուսիահին բացարձակապէս. մինչդեռ Գալմանացիները միշտ աշխատած են լեհական ազգայնութիւնը չնչել։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

Հետեւեալ գիրքերն կարելի է ստանալ Արմենիահ խմբագրատունէն, իրենց առջեւ նշանակուած գիներով և փոստի ծախքը խմբագրատունէն վճարուելով։

Արժէքը կանխիկ չվճարուած՝ գիրք չղրկուիր։

ՉՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

Ա. ՀԱՅ ԴԻՒՑԱԶՆՈՒՀԻ ՄԸ (սպառած)։
Բ. ՀԱՅ ԳԻՒՂԱՑԻ »
Գ. ՍԱՂՄՈՍ ԻՍՐԱՑԷԼԻ »
Դ. ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՊՈՒԼՂԱՐԻՈՑ ԵՒ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԻՆ ՊՈՒԼՂԱՐ ԱՊՍՏԱՄԲԱՊԵՏԱՑ (Պուլղար ազգին իր ազատութիւն ձեռք բերելու համար մէկ դարէ ի վեր արած չանքերի խիստ հետաքրքրաշարժ նկարագրութիւնն է։) (1 ֆր. 10 սնթմ.) 1 ֆր. 50 սթմ.
Ե. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹՇՈՒԱՌՆԵՐԸ.—(Հայաստանցիներուն պանդխտութեան տխուր հետեւանքներուն մէկ փոքրիկ պատկերը կը ներկայացունէ վիպական կերպով։) Գին (90 սնթմ.) 1 ֆրանգ 20 սնթմ.
Զ. ԳԱՄԱՌ ՖԱԹԻՊԱ — ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ յետ այբուբենաց ուարտեղուց. (Մեծանուն հայ բանաստեղծին վերջերս գրած ազատաշունչ ընտիր ոտանաւորներէն 3ը՝ առանձին տետրակով հրատարակուած են)։ 50 հատը 2 ֆր. և 50 սանթիմ, հատը (5 սնթմ.) 10 սանթիմ։
Է. ԼԻՆԶԻ ՕՐԵՆՔԸ ՏԱՃԿԱՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. (Սպառած).

ԻՄ ՀԱՅՐԱՍՊԱՆ ԸՆԿԵՐԸ

Կ. ՊՕԼՍՈՑ ՀԱՅՈՑ ԿԵԱՆՔԷՆ ԱՌՆՈՒԱԾ ՄԻ ԻՐԱԿԱՆ ՎԷՊ)

ԳՐԵՑ ԱՊԼԶԱՐՒՊ

Այս հետաքրքրաշարժ գրուած կը ներկայացունէ ընտանեկան տխուր պատկերներէ մին ուր կը տեսնուի թէ անթարթօրեան մի հայր իւր ապականուած վարքուբարքով որչա՛փ չարիքներու պատճառ գարձած է և վերջ ի վերջոյ ինք ալ իւր որդու ձեռքով սպաննուած և անհետացած է աշխարհէ։

Կը ծախուի Արմենիահ խմբագրատունը, գին 1 ֆրանգ, փոստի ծախքը խմբագրատունէն վճարուելով։

Մ. Փորթուգալեանի հրատարակած գիրքերուն վրայ մանաւոր զեղչ կը լինի Պարսկաստանի Հայերին համար որոնց կը պրկուի փակադծի մէջ նշանակուած գիներուն։

ԿԱՐԵՒՈՐ ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

ԲԱՌԳԻՐՔ
ԳԱՂՂԻԵՐԷՆ—ՀԱՅԵՐԷՆ

ԱՐՈՒԵՍՏԻՑ ԵՒ ԳԻՏՈՒԹԵԱՆՑ
ԵՒ
ԳԵՂԵՑԻԿ ԴՊՐՈՒԹԵԱՆՑ

ԵՐԿՈՒ ՀԱՏՈՐ
Պատկերազարդ տպագրութիւն

Ընտիր թղթի վրայ, մեբՁաւորապէս 1300 ձեւերով, մեծադիր քառածալ, մօտ 300 թերթերէ բաղկացեալ ի վերջ երկրորդ Հատորին՝ յաւելուած Հայերէն–Գաղղիերէն Բառագրոց։

ԳԼՈՒԽ ԳՈՐԾՈՑ

Հ. ՄԱՆՈՒԷԼ ՊՐՊՊ.Ի ԳԱԶՈՒՆԵՒՈՑ

Լոյս տեսած է Առաջին Հատորն։ 150 թերթ, 627 գեղեցիկ ձեւերով։

Բայսւած է բաժանորդագրութիւն երկու Հատորին ի միասին։

ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Ա. Կանխիկ վճարուած բաժանորդագնոյ երկու հատորին ի միասին։

Բ. Բաժանորդագինն է 50 ֆր.։

Գ. Բաժանորդագրութիւնն կը շարունակուի մինչեւ յվերջ 1891 տարւոյս։

Դ. Բաժանորդագրութեան պայմանաժամն աւարտելէ յետոյ՝ գինը պիտի բարձրանայ։

Ե. Բաժանորդագրուողք պիտի ընդունին անդորրագիրը գրամոյ ստացման ժամին ի Վարչութենէ Տպագրատան Մխիթարեան Պատ. Միաբանութեան Վենետկոյ։

Զ. Բաժանորդագրուողք պիտի ընդունին Առաջին Հատորն անդորրագրին հետ ի միասին. իսկ Երկրորդ Հատորն՝ այն ինչ տպագրութիւնն աւարտի

Այս կարեւոր գործին բաժնորդագրուիլ ցանկացողները կարող են դիմել նաեւ Մարսէյլ Արմենիահ խմբագիր–անօրէնն Մ. Փորթուգալեանին որ այդ ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ ԲԱՌԳԻՐՔԻ բաժնորդագրութեան գործակալ կարգուած է։

ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

ՐԱՖՖԻ, ԴԱՒԻԹ ԲԷԿ պատմական վէպ (1722–1728) Ա, Բ և Գ գիրքերն վերջաբանով մէկտեղ մէկ հատորի մէջ ամփոփուած. Բ տիպ 10 ֆր.։

ՐԱՖՖԻ, ԽԵՆԹԸ (Ալիածները վերջին ռուս–թուրքական պատերազմից) և ՋԱԼԱԼԷՏՏԻՆ (Մի պատկեր նրա արշաւանքից)։ երկուքը մէկտեղ մէկ հատորի մէջ ամփոփուած. Բ տիպ 8 ֆր. 75 ս.

ՐԱՖՖԻ, ՀԱՑ ԿԻՆԸ ԵՒ ՀԱՑ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ 5 ֆր. 25 սնթմ.։

ՐԱՖՖԻ, ԿԱՑԾԵՐԻ ՎԵՐՋԸ 1 ֆ. 75 ս.։

ՏԵՐԵՆՑ, ԹԷՕԴՈՐՈՍ ՌԵՏՈՒՆԻ 3 ֆրանգ 50 սանթիմ

Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆՑ, ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԹԱԶԱԿՐՈՒԹԵԱՆՑ և Թագաւորութեանն Երուսաղիմայ 2 ֆրանգ

ՆԻԿՈԼ կամ դարձ Հայոց Եւրոպիոյ ի կաթոլիկութիւն 1 ֆր.

ՁԱՑՆԱԴՐԵԼ ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆ
Մ. Պատարագի 10 ֆր.
ԵՐԶՆԿԵԱՆՑ, ԱԶԳԱՑԻՆ ԵՐԳԱՐԱՆ (Ձայնագրեալ հայկական նոտաներով) 2 ֆր. 80 սանթիմ

ՇԱՐԺՈՒՄՆ ՀԱՑԱՍՏԱՆԻ (L'Arménie en mouvement). Մայր Հայաստանի պատկերը 1 ֆրանգ

—ՐԱՖՖԻ. — ՍԱՄՈՒԷԼ (Րաֆֆիի հրատարակած ազգային վէպերի վերջինն է այդ որի նիւթը առնուած է Դաղստանի Հայերի կեանքէն և որ, բացի իւր ներշնչած ազատասիրական զգացումներէ, հետաքրքրաշարժ տեղեկութիւններ կուտայ այն ժամանակի Հայերի բարքերուն, սովորութիւններուն ևայլնի վրայ։) 10 ֆր.

—Հ. Ղ. Ալիշան— Նշմարք եւ նշխարք Հայաստանի Ա, Բ և Գ պրակները (Հայաստանի հետաքրքրական տեղերէն և քաղաքներէն 36ին լուսանկար պատկերները զետեղուած են նշմարքի 3 պրակներուն մէջ, անոնցմէ իւրաքանչիւրին վրայ պատմական և աշխարհագրական հմտալից տեղեկութիւններով, աշխարհաբար լեզուով գրուած Վեր. Հ. Ղ. Ալիշանէն)։ 3 պրակներն միասին 6 ֆր. և 50 սնթմ.

Հ. Ղ. Ալիշան — Պատկերազարդ Աշխարհագրութիւն Նոր Հայաստանի (Բազմահմուտ Հ. Ալիշանի աշխատասիրութեամբն հրատարակուած այս աշխարհագրութիւն որ մեծադիր և երկհատոր 105 երեսներէ բաղկացած է և դիւրահասկանալի պարզ գրաբար լեզուով գրուած, զարդարուած է 35ի չափ պատկերներով որոց մէջ կը գտնուին Վան քաղաքի, Վանի բերդի, Պայազիտի, Էջմիածնի, Անիի զանազան նշանաւոր աւերակներուն ևն. պատկերներն։ Գրքին վերջը կը գտնուի բուն Հայաստանի, այսինքն Մեծ Հայքի, բոլոր քաղաքներուն, բերդերուն, գիւղերուն, լեռներուն, գետերուն մի ընդարձակ ցանկը ուր իւրաքանչիւրին առջեւ նշանակուած է թէ գրքի քանիերորդ տանը մէջ գրուած է անոր վրայ)։ Գին 5 ֆր. և 50 սնթմ.։

ՀԱՑ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ՊԱՏԿԵՐՔ

1878ին Պէռլին գնացած Հայ պատուիրակութեան պատկերը՝ գեղեցիկ թղթի վրայ առնուած և պատուիրակներուն անուններն հայերէն և ֆրանսերէն տառերով միանգամայն տպագրուած, կը ծախուի Արմենիահ խմբագրատունը։ Գինն է 1 ֆրանգ, փոստի ծախքն խմբագրատունէն վճարուելով։

ՏՆՕՐԷՆ—ԽՄԲԱԳԻՐ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ
Le Gérant : FÉLIX ENFFANTIN.

ՄԱՐՍԷՑԼ
Հայերէն տպարան Մ. Փորթուգալեանի
Marseille. — Imprimerie et Papeterie du Midi, Allées de Meilhan, 44.